ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 22 հուլիսի 2022թ.

2022 թվականի հուլիսի 08-ին, ժամը 14:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամ Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ, զարգացման պատասխանատու Սարգիս Ղազարյանը, առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. Բյուրեղավան համայնքի 2022 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին,
2. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 27-ի N 77-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»,
3. «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին,
4. Մեկ անձից գնման ընթացակարգով գնում կատարելու թույլտվություն տալու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,
5. Մեկ անձից գնման ընթացակարգով գնում կատարելու թույլտվություն տալու մասին,
6. «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին»,
7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման կիսամյակային հաշվետվության մասին,

8. Բյուրեղավան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը, համայքնում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 17-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,
9. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 79-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
10. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 80-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
11. «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության լրիվ մաշված գույքերը դուրս գրելու մասին»,
12. Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող լրիվ մաշված գույքը դուրս գրելու մասին,
13. Քաղաքային բնակավայր ընդգրկող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տնային կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին:

համայքնի ավագանու որոշմուների նախագծերի քննարկում:

Օրակարգի առաջին՝ ***«Բյուրեղավան համայնքի 2022 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին»*** հարցի շուրջ Լ. Պողոսյանը ներկայացրեց, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ (***Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.***) և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին (***Համայնքի ղեկավարը կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխություններն ու ապահովում է բյուջեի կատարումը, որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվություն է ներկայացնում համայնքի ավագանուն.***) կետերի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի (***1. Համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն և համապատասխան մարզպետին:***)՝ ավագանին որոշում է ի գիտություն ընդունել Բյուրեղավան համայնքի ղեկավարի հաղորդումը 2022 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:

**Որոշվեց՝**

հավանություն տալ ***«Բյուրեղավան համայնքի 2022 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 2 Դեմ- 0

***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 27-ի N 77-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»*** որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն: Նախագիծը մշակելիս հաշվի է առնվել Բյուրեղավան համայնքում ընթացիկ և կապիտալ ծրագրերի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքները:

Համայնքի 2022 թվականի բյուջեի եկամտային մասում առաջարկվում է ավելացնել գույքային հարկեր անշարժ գույքից՝ 1850,0 հազար դրամով, որից գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար՝ 650,0 հազար դրամ և հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար՝ 1200,0 հազար դրամ: Այսպիսով, համայնքի 2022 թվականի բյուջեն 429703,5 հազար դրամից կազմում է 431553,5 հազար դրամ:

Բյուրեղավան համայնքում 2022 թվականի բյուջեով նախատեսվել է կառուցել կեղտաջրեր հեռացնելու նպատակով կոլեկտոր, որի համար անհրաժեշտ է պատվիրել նշված աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ ավելացնելով «5134» հոդվածը 3600,0 հազար դրամով:

Առաջարկվում է համայնքի բյուջեի «Փրկարար ծառայություն» (բաժին 03, խումբ 2, դաս 1) կենաղային ապրանքներ նյութեր «4267» հոդվածը՝ 400,0 հազար դրամը, «Բնակարանային շինարարություն» (բաժին 06, խումբ 1, դաս 1) այլ ընթացիկ դրամաշնորհ «4639» հոդվածը ավելացնել 400,0 հազար դրամով:

«Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ» (բաժին 02, խումբ 2, դաս 1) այլ ընթացիկ դրամաշնորհ «4639» հոդվածը ավելացնել 450,0 հազար դրամով և այլ մեքենաներ և սարքավորումներ «5129» հոդվածը նվազեցնել 3600,0 հազար դրամով:

«Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)» (բաժին 10, խումբ 7, դաս 1) այլ նպաստներ բյուջեից «4729» հոդվածն ավելացնել 500,0 հազար դրամով

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ նորմատիվ իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում կատարում է միայն այդ նորմատիվ իրավական ակտն

ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը: Նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

Լ.Պողոսյանը ներկայացրեց, որ «***«Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին»*** որոշման նախագիծը մշակվել է՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի *(Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով՝ համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը)* և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունն ու «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Աբովյանի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի տնօրենի գրությունը, ավագանին որոշում է Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքում և Նուռնուս գյուղում առկա միջին և ցածր ճնշման գազատարները հաշվառել համայնքի հաշվեկշռում և անհատույց և անժամկետ օգտագործման պայմանագրով տրամադրել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Աբովյանի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղին՝ սպասարկում իրականացնելու նպատակով:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Աբովյանի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի տնօրենը գրությամբ հայտնել է, որ Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքում և Նուռնուս գյուղում առկա են միջին և ցածր ճնշման գազատարներ, որոնք սպասարկվում են մասնաճյուղի կողմից, սակայն հաշվեկշռային պատկանելիություն չունենալու պատճառով կատարված աշխատանքների ֆինանսական ձևակերպում ստանալու ժամանակ խնդիրներ են առաջանում: Հաշվի առնելով դա, առաջարկել է գազատարները անհատույց օգտագործման պայմանագրով հանձնել Աբովյանի ԳԳ մասնաճյուղին՝ պատշաճ սպասարկում իրականացնելու նպատակով:

**Որոշվեց՝**

հավանություն տալ «***«Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 2 Դեմ- 0

Լ.Պողոսյանը ներկայացրեց օրակարգի չորրորդ հարցը՝ ***«Մեկ անձից գնման ընթացակարգով գնում կատարելու թույլտվություն տալու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»*** ավագանու որոշման նախագծի ընդունումը

պայմանավորված է այն հանգամանքով, որ Բյուրեղավան համայնքում 2022 թվականի բյուջեով նախատեսվել է կառուցել նոր մանկապարտեզ և մանկապատանեկան մարզադպրոց, որոնց կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազման աշխատանքների գնումը համարվել է անհետաձգելի:

Բյուրեղավան համայնքի մեկ մանկապարտեզը այլևս չի կարողանում ապահովել մանկապարտեզ հաճախելու ցանկողների պահանջները: Համայնքը չունի մարզադպրոց՝ առողջ սերունդ դաստիարակելու համար:

Քանի որ գնման առարկայի արժեքը գերազանցում է գնումների բազային միավորը՝ 1 մլն ՀՀ դրամը, ուստի գնման գործընթացի առանձնահատկություններով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել ընդունել համայնքի ավագանու որոշում՝ մեկ անձից գնման ընթացակարգով գնման գործընթաց կազմակերպելու համար

Նախատեսված աշխատանքների գնումն իրականացվելու է Բյուրեղավան համայնքի 2022 թվականի բյուջեով նախատեսված միջոցների շրջանակներում :

**Որոշվեց՝**

հավանություն տալ ***«Մեկ անձից գնման ընթացակարգով գնում կատարելու թույլտվություն տալու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 2 Դեմ- 0

***«Մեկ անձից գնման ընթացակարգով գնում կատարելու թույլտվություն տալու մասին»*** նախագծի շուրջ Լ. Պողոսյանը ներկայացրեց, որ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի կոյուղու կենտրոնական կոլեկտորի կառուցման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության աշխատանքների գնումը համարվել է անհետաձգելի:

Բյուրեղավան համայնքի կոյուղու կենտրոնական կոլեկտորը կառուցվել է 1940-50-ական թվականներին և անցնում է Արզնի ձորի եզրով: Տարիների ընթացքում նրա երկայնքով կառուցվել են առանձնատներ, ինչպես նաև տարբեր ինքնակամ շինություններ, որոնք բարդացրել ու դժվարացրել են մոտեցումը կոլեկտորին և երբեմն դարձրել անհասանելի, որն անհնար է դարձնում կոլեկտորի սպասարկումն ու վերանորոգումը:

Կոյուղագիծը պարբերաբար խցանվում է, կոյուղաջրերը լցվում են ձորը՝ առաջացնելով բնապահպանական և սանիտարահիգիենիկ լուրջ խնդիրներ: Ձորով անցնող ճանապարհին առաջացել են իջվածքներ, իսկ ձմռանը նաև մերկասառույց՝ երթևեկությունը դարձնելով վտանգավոր, ինչն էլ

շրջակայքում աշխատող տնտեսվարող սուբյեկտների, առողջարանում հանգստացողների, զբոսաշրջիկների և բնակչության արդարացի դժգոհության պատճառ է հանդիսանում: «Վեոլիա Ջուր» ընկերության և մարզպետարանի աշխատակիցների հետ համատեղ ուսումնասիրության և հարցի քննարկման արդյունքում համայնքապետարանը եկել է այն եզրահանգման, որ ավելի նպատակահարմար է և շահավետ գործող կոյուղագծին զուգահեռ Բյուրեղավան քաղաքի Կոտայքի փողոցով կառուցել նոր կոլեկտոր:

**Որոշվեց՝**

հավանություն տալ ***«Մեկ անձից գնման ընթացակարգով գնում կատարելու թույլտվություն տալու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 2 Դեմ- 0

***«Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին» որոշման նախագիծը կազմվել է՝*** համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի *(Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը:)* Պոլիկլինիկային կապիտալ վերանորոգման աշխատանքները ավարտելուց հետո *Հիմնադիրը որոշեց ձեռք բերել նոր գույք և անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ընկերությանը:)* և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշում է «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ին անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել համայնքային սեփականություն հանդիսացող գույք ( տնտեսական գույք):

Որոշման նախագծով նախատեսվում է նշված գույքի պահպանման և սպասարկման ծառայությունների իրականացումը հանձնարարել «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ին :

**Որոշվեց՝**

հավանություն տալ ***«Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 2 Դեմ- 0

Օրակարգի 7-րդ՝ «***Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման կիսամյակային հաշվետվության մասին»*** հարցը ներկայացրեց Սարգիս Ղազարյանը: Սույն որոշման նախագիծը կազմվել է համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի՝ *համայնքի ավագանին հաստատում է համայնքի տարեկան աշխատանքային պլանը, դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունները*: Բյուրեղավան համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը (այսուհետ՝ ՏԱՊ) համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է, այն փաստաթուղթ է, ուր հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ տվյալ տարվա համար ՏԻՄ-երի ռազմավարությունները, ծրագրերը և միջոցառումները:

Բյուրեղավան համայնքի 2022թ. ՏԱՊ-ի բաժիններից է ՏԱՊ-ի մոնիտորինգի և գնահատման պլանը:

ՏԱՊ-ի իրականացման կիսամյակային հաշվետվությունը կազմվել է մեթոդական ուղեցույցի համաձայն և մանրամասն ներկայացված են Բյուրեղավան համայնքի 2022 թվականի ՏԱՊ-ով նախատեսված և 2022 թվականին իրականացված աշխատանքների վերաբերյալ ծավալային և քանակական տվյալները:

**Որոշվեց՝**

հավանություն տալ «***Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման կիսամյակային հաշվետվության մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 2 Դեմ- 0

Լիլիթ Ավուշյանը ներյակացրեց օրակարգի հաջորդ՝ ***«Բյուրեղավան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը, համայքնում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 17-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»*** նախագիծը : Ավուշյանը ներկայացրեց, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի կարգավորումները ցույց են տալիս, որ օրենսդիրը համայնքում սոցիալական աջակցության տրամադրումը դիտարկել է որպես համայնքի կամավոր խնդիր, հետևաբար օրենսդրական իմպերատիվ պահանջ է սահմանել, որ սոցիալական աջակցության

վերաբերյալ կամավոր խնդիրների լուծումը իրականացվի ավագանու կողմից սահմանված չափորոշիչների հիման վրա:

**Որոշվեց՝**

հավանություն տալ ***«Բյուրեղավան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը, համայքնում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 17-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 2 Դեմ- 0

Օրակարգի 9-րդ հարցի՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 79-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»*** հարցի շուրջ աշխատակազմի ղեկավարը ներկայացրեց, որ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ *նորմատիվ իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում կատարում է միայն այդ նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը*, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2022 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 79-Ա որոշման N2 հավելվածը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2022 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, շարադրել նոր խմբագրությամբ:

Համայնքի ղեկավարի առաջարկությունը կատարվել է պայմանավորված Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի հուլիսի 04-ի N 47-Ա որոշմամբ հաստատված կարգի համաձայն համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներին աշխատակազմում ունեցած երկար տարիների (հինգ և ավելի տարիներ) աշխատանքային ստաժի համար կիրառվող հավելավճարի տրամադրման պահանջով:

**Որոշվեց՝**

հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 79-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 2 Դեմ- 0

***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 80-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»*** որոշման նախագծի շուրջ Լ. Ավուշյանը ներկայացրեց, որ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ *նորմատիվ իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում կատարում է միայն այդ նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը*, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների 2022 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դյույքաչափերը հաստատելու մասին» N 80-Ա որոշման N1 և N3 հավելվածները՝ «Բյուրեղավանի բարեկարգում և կանաչապատում» ՀՈԱԿ-ի և «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ԱՈՒՀ ՀՈԱԿ-ի 2022 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, շարադրել նոր խմբագրությամբ:

Համայնքի ղեկավարի առաջարկությունը կատարվել է «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ԱՈՒՀ և «Բյուրեղավանի բարեկարգում և կանաչապատում» ՀՈԱԿ-ների տնօրենների զեկուցագրի հիման վրա:

Արվեստի դպրոցի տնօրենի ներկայացմամբ անհրաժեշտություն է առաջացել ընդունել ժողովրդական փողային գործիքների՝ դուդուկ, զուռնա, պկու, պարկապզուկ, մասնագետ՝ նվագարանները մասսայականացնելու և զարգացնելու համար: Փոփոխված հաստիքացուցակով առաջարկվում է ավելացել է մեկ դասատուի հաստիք:

«Բյուրեղավանի բարեկարգում և կանաչապատում» ՀՈԱԿ-ի տնօրենը առաջարկում է հաստիքացուցակում ավելացնել համայնքի Ջրաբեր բնակավայրի ջրամատակարարման հարցերով պատասխանատուի հաստիք:

Փոփոխված հաստիքացուցակով առաջարկվում է ավելացել քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատանք իրականացնող մեկ հաստիք՝ 0,5 հաստիքային միավորով:

**Որոշվեց՝**

հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 80-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 2 Դեմ- 0

***«Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության լրիվ մաշված գույքերը դուրս գրելու մասին».*** «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրենը 2022 թվականի հուլիսի 13-ի N 123 գրությամբ ներկայացրել է պոլիկլինիկայի դուրս գրման ենթակա, հետագա շահագործման համար ոչ պիտանի թվով 118 հիմնական միջոցների ցանկը: Կազմվել են հիմնական միջոցների դուրս գրման ակտեր:

**Որոշվեց՝**

հավանություն տալ ***«Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության լրիվ մաշված գույքերը դուրս գրելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 2 Դեմ- 0

***«Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող լրիվ մաշված գույքը դուրս գրելու մասին»*** ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Միշա Եղիազարյանը նշեց, որ նախագիծը կազմվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31-ի N 787-Ն հրամանով հաստատված կարգի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2022 թվականի ապրիլի 21-ի N 23-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կազմած գույքերի դուրս գրման ակտի և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության պետական կոմիտեի «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» բաց բաժնետիրական ընկերության եզրակացության համաձայն.

**Որոշվեց՝**

հավանություն տալ ***«Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող լրիվ մաշված գույքը դուրս գրելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 2 Դեմ- 0

***«Քաղաքային բնակավայր ընդգրկող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տնային կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին»*** որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով. ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 113-րդ հոդվածը քաղաքացիների և իրավաբանական անձանց համար նախատեսում է պատասխանատվություն քաղաքներում և այլ բնակավայրերում շներ և կատուներ պահելու կանոնները խախտելու, ինչպես նաև նույն խախտումների համար, որոնց հետևանքով վնաս է պատճառվել քաղաքացիների առողջությանը կամ գույքին: Նույն

օրենսգրքի 114-րդ հոդվածի համաձայն՝ նախատեսվում է պատասխանատվություն արգելված տեղերում անասուններ պահելու համար:

Իրավակիրառական պրակտիկան ցույց է տալիս, որ Բյուրեղավան համայնքում՝ համայնքի ղեկավարի կողմից երբևիցե չի իրականացվել ֆիզիկական և իրավաբանական անձանց տիրապետման ներքո գտնվող տնային կենդանիների հաշվառում, չեն սահմանվել դրանց պահելու համապատասխան կանոնները, զբոսանքի, ինչպես նաև կենդանիների դիերի թաղման և թափոնման իրականացման հատուկ առանձնացված վայրերը և այլ:

Արդյունքում՝ վերը նշված գործող իրավական ակտերի դրույթները չեն իրացվել համայնքային մակարդակում՝ կանոնները սահմանող ենթաօրենսդրական ակտի բացակայությամբ պայմանավորված:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց տիրապետման ներքո գտնվող տնային կենդանիների, մասնավորապես՝ մարտական, պարեկային, ծառայողական և այլ ցեղատեսակների շների զբոսանքն առանց դնչկալի և կապի կարող է իրական վտանգ ներկայացնել Բյուրեղավան համայնքի բնակչության համար: Շների կողմից եղել են հարձակման և (կամ) ագրեսիվ պահվածքի դեպքեր, որոնց հետևանքով մարդկանց և կենդանիներին մարմնական վնասվածքներ և (կամ) հոգեբանական տրավմա է հասցրել:

Սույն կանոնների ընդունմամբ ակնկալվում է կարգավորել վերը նշված խնդիրները, այդ թվում՝ մարդկանց և կենդանիների առողջությանը սպառնացող (առավելապես՝ շների կողմից) վտանգը հասցնել նվազագույնի, ինչպես նաև որոշման նախագծի ընդունում կարող է ապահովել Բյուրեղավան համայնքի բյուջեի մուտքերի որոշակի աճ: Նախագծի ընդունման արդյունքում, տեղական մակարդակում կիրացվեն օրենսդրությամբ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի համար սահմանված լիազորությունները, միաժամանակ կկարգավորվեն այդ լիազորությունների իրականացումից բխող իրավահարաբերությունները:

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամ՝ _____ Արտյոմ Ավագյան